



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՅ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ք. Եղեգնաձոր

23/05/2019

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱՎԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 8 անդամներ:

Բացակա էին՝ Արտակ Ալոյանը, Նարինե Գրիգորյանը, Սմբատ Սմբատյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Հարությունյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Անժելա Սարգսյանը

Լսեցին

23/05/2019թ.թիվ 5 ՀԵՐԹԱՎԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱՎԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով.

Հաստատել 23/05/2019 թ. թիվ 5 հերթական նիստի օրակարգը՝

1. Համայնքային բյուջեում վերաբաշխում կատարելու մասին
2. Համայնքի կարիքավոր բնակիչներին օգնություն տալու մասին
3. Համայնքը էկո-տնտեսական տարածք դարձնելու և համայնքում մետաղական հանքարդյունաբերությունն արգելելու՝ համայնքի բնակիչների առաջարկությանը հավանություն տալու մասին
4. Համայնքային սեփականություն հանդիսացող 0 . 00856 հա մակերեսով հողատարածքը մեկ լոտով աճուրդով օտարելու մասին
5. Համայնքային սեփականություն հանդիսացող 0 . 0006 հա մակերեսով հողատարածքը մեկ լոտով աճուրդով օտարելու մասին
6. Համայնքային սեփականություն հանդիսացող 0 . 0024 հա մակերեսով հողատարածքը մեկ լոտով աճուրդով օտարելու մասին
7. Համայնքային սեփականություն հանդիսացող 0 . 028 հա մակերեսով հողատարածքը մեկ լոտով աճուրդով օտարելու մասին

